Արձանագրություն N 3

<< ՀՀ ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2023/1>> ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

16 դեկտեմբերի, 2022թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ — Խ. Վարդանյան

Հանձնաժողովի անդամներ

/ԳՊ/ԳԱ/՝ — Է. Գրիգորյան

/ԳՊ/ԳԱ/՝ — Ն. Պետրոսյան

/ԳՊ/ԲԱ/՝ — Գ. Հարությունյան

/ԳՊ/ԲԱ/՝ — Ռ. Աջամօղլյան

Քարտուղար՝ /ԳՊ/ՄԻՄ/ — Լ. Ադամյան

1. <<**ՀՀ ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2023/1**>> ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, 2022թ.-ի դեկտեմբերի 16-ին, ժամը 10:00-ին:

2. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Տվյալները
1	<<Ալպանո>> ՍՊԸ	ք. Երևան, Ավան, Դ. Վարուժան 9/27, հեռ. +37491041060
2.	<<ՍԱԺԵ>> ՍՊԸ	Արմավիր Բամբակաշատ 16/1 փ. Տ. 4, հեռ. 077818786
3.	<<Քասլ Քոնսթրաքշն>> ՍՊԸ	Ք. Երևան, 0012, Սունդուկյան 15/1, բն. 6, հեռ. 043330133
4.	<<123>> ՍՊԸ	Ք. Գորիս, Սյունիքի 97, հեռ.077666161
5.	<<Բեստշին>> ՍՊԸ	Ք. Գորիս, Գետափնյա 7/14, 099600077
6.	<<Սպեգան>> ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան,Ն. Զարյան 73/1, հեռ. +37477121172
7.	Հայկ Սարգսյան ԱՁ	ՀՀ, ք. Երևան, Ազատամարտիկների 75 տ, 098976772
8.	<<Էյչ ընդ Էյչ>> ՍՊԸ	Ք. Երևան, Ավան-Առինջ, 3/5 շ, հեռ. 077824282
9.	<<ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ	Ք. Ստեփանավան, Չարենցի 13, հեռ. 095777073

3. Հանձնաժողովը որոշեց մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

<< ՀՀ ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2023/1>> ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

23 դեկտեմբերի 2022թ.
Ժամը՝ 12:00

4. Հայտերի բացման արդյունքում արձանագրվեց, որ ընթացակարգի մասնակիցների կողմից ուղարկված հայտերը Համակարգում կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան, և ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ <<Քասլ Քոնսթրաքշն>> ՍՊԸ-ի կողմից ուղարկված հայտի, որում բացակայում է Ծավալաթերթ-նախահաշիվը /հավելված 2.1/:

Ներկայացված հայտերում հանձնաժողովն արձանագրեց հետևյալ անհամապատասխանությունները.

- <<Ալպանո>> ՍՊԸ -ի հայտում գնային առաջարկի ավելացված արժեքի հարկ սյունակում տառերով գրված է գոյություն չունեցող թիվ, սակայն արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում թվերով նշված գումարների հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով և թվերով նշված գումարին, ուստի գնային առաջարկը գնահատվեց բավարար՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ մասի բ) ենթակետը:

<<Ալպանո>> ՍՊԸ -ի հայտում էլեկտրոնային ստորագրման ամսաթիվը /16.12.2022թ./ չի համապատասխանում Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի Ձևի 1.3.1 կետում նշված ամսաթվին /14.12.2022թ/, ինչպես նաև Ծավալաթերթ-նախահաշիվը /հավելված 2.1/ սխալ է լրացված /բոլոր տողերի հանրագումարը+շահույթը կազմում է 7401569.87 ՀՀ դրամ 7431569.87 ՀՀ դրամի փոխարեն/:

- <<ՍԱԺԵ>> ՍՊԸ-ի հայտի գնային առաջարկում չափաբաժնի անվանումը լրացված չէ, ուստի հանձնաժողովը որոշեց հայտը գնահատել անբավարար և մերժել:

- <<Քասլ Քոնսթրաքշն>> ՍՊԸ-ի հայտում էլեկտրոնային ստորագրման ամսաթիվը /15.12.2022թ./ չի համապատասխանում Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի Ձևի 1.3.1 կետում նշված ամսաթվին /20.10.2022թ/, ինչպես նաև Ծավալաթերթ-նախահաշիվը /հավելված 2.1/ կցված չէ:

- <<Բեստշին>> ՍՊԸ-ի հայտում էլեկտրոնային ստորագրման ամսաթիվը /15.12.2022թ./ չի համապատասխանում Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի Ձևի 1.3.1 կետում նշված ամսաթվին /14.12.2022թ/, ինչպես նաև բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրության համար այլ անձին տրված տնօրենի լիազորագիրը:

- Հայկ Սարգսյան ԱՁ-ի հայտում Ծավալաթերթ-նախահաշիվը /հավելված 2.1/ կիսատ է լրացված՝ բացակայում է <<սենյակներ 6-րդ և 7-րդ հարկերում>> բաժնում կատարվելիք աշխատանքների ցանկը ու գները և առանց դրա ընդամենը գումարը համապատասխանում է գնային առաջարկի ընդհանուր գնին, այնինչ բոլոր տողերի գումարը պետք է համապատասխանի գնային առաջարկին:

- <<ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի հայտում Ծավալաթերթ-նախահաշիվը /հավելված 2.1/ սխալ է լրացված. ընդամենը տողերի գումարը գրված է 7207196 ՀՀ դրամ, այնինչ գումարային ստուգման արդյունքում կազմում է 6885376 ՀՀ դրամ, որով առաջնորդվելու դեպքում ընդամենը գումարը չի համապատասխանում գնային առաջարկով ներկայացված ընդհանուր գնին:

5. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

6. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

<<դրամ>>

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Գնման առարկայի գնման հայտով հաստատված գնման ընդհանուր գինը	Մասնակցի անվանումը և առաջարկված ընդհանուր գինը *																	
					<<Ալպանո>> ՍՊԸ		<<ՍԱԺԵ>> ՍՊԸ		<<Քասլ Քոնսթրաքշն>> ՍՊԸ		<<123>> ՍՊԸ		<<Բեստշին>> ՍՊԸ		<<Սպեգան>> ՍՊԸ		Հայկ Սարգսյան ԱՁ		<<Էյչ ընդ Էյչ>> ՍՊԸ		<<ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ	
					Գնային առաջարկ		Գնային առաջարկ		Գնային առաջարկ		Գնային առաջարկ		Գնային առաջարկ		Գնային առաջարկ		Գնային առաջարկ		Գնային առաջարկ		Գնային առաջարկ	
					առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/	ներառյալ ԱԱՀ
1	Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Վիճակագրական կոմիտեի Կառավարական 3-րդ շենքում հատկացված տարածքների ընթացիկ նորոգման աշխատանքներ/	դրամ	1	11092600	7431569.87	8917883.84	8306345	9967614	8852650	10623180	7764417.8	9317301.4	7808863	9370635	9141600	10969920	10268710	-	8930252	10716302	8000000	9600000

(*-եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում,ապա լրացվում է միայն "Առանց ԱԱՀ" սյունակը)

7. Հանձնաժողովն որոշեց հրավերով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և <<Ալպանո>> ՍՊԸ-ին, <<Քասլ Քոնսթրաքշն>> ՍՊԸ-ին, <<Բեստշին>> ՍՊԸ-ին, Հայկ Սարգսյան ԱՁ-ին, <<ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ -ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

8. Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 2022 թվականի դեկտեմբերի 27-ին, ժամը 12:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեով, 613 աշխատասենյակում:

<< ՀՀ ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2023/1>> ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

27 դեկտեմբերի 2022թ.
Ժամը՝ 12:00

9. Հանձնաժողովն արձանագրեց, որ <<Ալպանո>> ՍՊԸ -ի, <<Քասլ Քոնսթրաքշն>> ՍՊԸ-ի, <<Բեստշին>> ՍՊԸ-ի, Հայկ Սարգսյան ԱՁ-ի, <<ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի հայտերում արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկվել են, ուստի հանձնաժողովը որոշեց վերը թվարկված կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

10. Ներկայացված հայտերի հիման վրա << **ՀՀ ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2023/1**>> ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել <<Ալպանո>> ՍՊԸ-ին, իսկ <<Քասլ Քոնսթրաքշն>> ՍՊԸ-ին, <<Բեստշին>> ՍՊԸ-ին, Հայկ Սարգսյան ԱՁ-ին, <<ՇԻՆՆԱՐ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ին, <<123>> ՍՊԸ -ին, <<Սպեգան>> ՍՊԸ-ին, <<Էյչ ընդ Էյչ>> ՍՊԸ-ին չճանաչել ընտրված մասնակիցներ:

11. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

12. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է անգործության ժամկետի ավարտից հետո, օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գնահատող հանձնաժողովի նախագահ
/ԳՊ/ԳԱՊ/՝ _____ Խ. Վարդանյան

Հանձնաժողովի անդամներ

/ԳՊ/ԳԱ/՝ _____ Է. Գրիգորյան

/ԳՊ/ԳԱ/՝ _____ Ն. Պետրոսյան

/ԳՊ/ԲԱ/՝ _____ Գ. Հարությունյան

/ԳՊ/ԲԱ/՝ _____ Ռ. Աջամօղլյան

Քարտուղար՝ /ԳՊ/Միմ/ _____ Լ. Ադամյան